Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

03 դեկտեմբերի 2024 թվական

ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Է. Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-28/24» ծածկագրով հրապարակված գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով 2024 թվականի հոկտեմբերի 18-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-28/24» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ ընթացակարգ): Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԳԱ Յունիոն» ՍՊ ընկերությունը, վերջինս համարվել է նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից 45-րդ չափաբաժնի մասով:

«ԳԱ Յունիոն» ՍՊԸ-ն, «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-28/24» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերին համապատասխան, իր դիմում-հայտարարությունում հայտարարել և հավաստել է՝ ««ԳԱ Յունիոն» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-28/24 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին...»:

«ԳԱ Յունիոն» ՍՊԸ-ն ընդգրկված է «գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց վերաբերյալ» ցուցակում, որի համաձայն «ԳԱ Յունիոն» ՍՊԸ-ն հանդիսանում է «ՄԳԿ Գրուպ» ՍՊԸ-ի հետ փոխկապակցված անձ:

«ՄԳԿ Գրուպ» ՍՊԸ-ն 26.10.2024 թվականից մինչև 26.10.2026 թվականը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ըստ, ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 32-րդ կետի 1-ին մասի բ ենթակետի՝ «մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին»: Ըստ ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 121-րդ կետի՝ «մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ԳԱ Յունիոն» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ Ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրն այն տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը և «ԳԱ Յունիոն» ՍՊԸ-ին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**